ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 փետրվարի 2018 թվականի N 08

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. 2018 թվականի փետրվարի 09-ին՝ ժամը 11^{00}-ին, գումարել համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով.

   1) Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին
   2) Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին
   3) Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին
   4) Կոտայքի մարզի Նոր Արտամետի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների համար հավելավճարի կիրառման կարգը և չափը հաստատելու մասին
   5) Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2018 թվականի հունվարի 11-ի N 04 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

2. Պարտավորեցնել աշխատակազմի քարտուղար Արմինե Զաքարյանին՝ օրենքով սահմանված կարգով ավագանու անդամներին տրամադրելու արտահերթ նիստի օրակարգը, ընդգրկվելիք հարցերի որոշման նախագծերը և համապատասխան փաստաթղթերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2018 թ. փետրվարի 06

գ. Նոր Արտամետ